ԼՂԻՄ. ՂԱՐԱԲԱՂԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ

Ղարաբաղի գիշերներ: Վերջին մեկուկես տարում դրանք այնքան նման չեն իրենց: Հագեցած լինելով ներքին լարվածությամբ, կասկածելի լռությամբ, որը մերթ մեկ, մերթ այլ անկյունում խախտում են աննպատակ հրետանային կրակոցները, այդ գիշերները բնավ չեն տրամադրում հանգստի, որի մասին արցախցիները պարզապես մոռացել են, այլ տագնապալի մտքեր են հարուցում գալիք օրվա խնդրահարույց բարօրության, իրենց երեխաների, հայրենի եզերքի ճակատագրի մասին:

Առավոտյան կողմ ղարաբաղյան անքուն գիշերները, որպես կանոն, վերածվում են զանազան կարգի լուրերի այս կամ այն միջադեպերի մասին, որ տեղի են ունեցել պարետային ժամի գործողության ընթացքում: Եվ միայն ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության հերթապահի աշխատանքային տետրում են գրանցվում ինքնավար մարզում տեղի ունեցող բոլոր եղելությունների մասին ստացվող տեղեկությունները: Սակայն սեպտեմբերի 22-ի առավոտյան այն մնաց մաքուր: Պատահարներ չեն գրանցվել:

Դա ինչ է. անդորր փոթորկից առա՞ջ, թե՞ այնքան սպասված հանդարտության սկիզբ ռեգիոնում: Այսպես թե այնպես արցախցիները անհամբերությամբ են սպասում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի բացմանը, որի հետ շատ հույսեր են կապում...

Իսկ առայժմ մարդիկ թաղված են շրջափակման հոգսերի մեջ: Կացությունը իրոք որ անմխիթարական է: Վառելիքի սուր պակասը սպառնալիքի տակ է դրել մարզի կենսապահովման համակարգը: Մեծ վնասներ է կրում ժողովրդական տնտեսությունը: Այսպես, Մարտունու և Մարտակերտի շրջաններում դադարեցված է խաղողահավաքը: Լեռնային Ղարաբաղում վազերի վրա մնացել են 40—50 հազար տոննա քաղցր հատապտուղներ: Եթե շրջափակումը շարունակվի ևս մի տասն օր, ապա այդ ամբողջ բերքը, անկասկած, կփչանա:

Նման դրություն է ստեղծվել անասնապահության բնագավառում: Մարզը հասցրել է ստանալ համակցված կերի կիսամյա ֆոնդի ընդամենը 10 տոկոսը: Կերի պակասի պատճառով ֆերմաներում սկսվել է խոզերի արտապլանային մորթը: Մեկ-երկու շաբաթ հետո հնարավոր է խոշոր եղջերավոր անասունների անկում: Շրջափակումը դարձել է նաև այն բանի պատճառը, որ մարզը ի վիճակի չէ արտադրանքն առաքել սպառողներին:

Մինչդեռ այսպես կոչված Շուշիի հեռուստաստուդիան, ամբողջ դատողությանը հակառակ շարունակելով դուրս գալ եթեր, ստեղծված կացության համար ամբողջ մեղքը բարդում է արցախցիների վրա: Ընդ որում, չամաչելով ակընհայտորեն հրահրիչ և հայ ժողովրդի հասցեին վիրավորական արտահայտություններից, նա մարզի ադրբեջանական բնակչությանը ներկայացնում է ուղղակի որպես հայկական ծայրահեղականության և ազգայնականության անմեղ զոհ:

Իսկ այսչափ դժվարին շրջանում երկրամասի բնակիչներին պարեն մատակարարելու հոգսը ստանձնել են զինվորականները: Վերջին մի քանի օրում փոխադրական ավիացիան Ստեփանակերտ է հասցրել մոտ 500 տոննա սննդամթերք, դեղորայք, կենսականորեն կարևոր այլ բեռներ: Այսպես թե այնպես, կյանքը շարունակվում է:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ